Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ՄԻԱՑԱԿԱՆ ԶՈԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ

1932

355.4
Մ-67

ՀՍԽՀ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

01 MAR 2010

355.4
Մ-67

Կ

ԱՕՅ
37680

# ՄԻԱՑԱԿԱՆ ՋՈԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐ»-Ի

ԵՐԵՎԱՆ 1932

28 JUN 2013

41.667

Действия унитарного отделения

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

[illegible] (բ). Պատվեր 628. Տիրաժ [illegible]

# ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Միացական ջոկի տակտիկա-հրաձգային պատրաստության այս գրքույկը խոշոր նշանակություն ունի կրտսեր հրամանատարների և կարմիր բանակային մասսայի տակտիկական ունակությունները է՛լ ավելի բարձրացնելու գործում:

Այս գրքույկը կազմված է համապատասխան ղեկավար հոդվածներից գլխավորապես «Բոյեվայա Պոդգոտովկա» թերթում լույս տեսած հոդվածներից:

Մեր զորամասերի կրտսեր հրամանատարները տակավին լայն գաղափար չունեն միացական (ունիտար) ջոկի հարձակման, պաշտպանության, հետախուզության և այլ խնդիրների մասին: Այդ պատճառով այս գրքույկը անհրաժեշտ է յուրաքանչյուր կրտսեր հրամանատարին և կարմիր բանակայինին տակտիկական պարապմունքների խնդիրները ու գործողությունները լավ յուրացնելու համար:

Գրքույկում տրված խնդիրները ներկայումս ավելի գնահատելի չեն. այդ խնդիրները յուրաքանչյուր կրտսեր հրամանատարին

տալիս են մեթոդական ցուցումներ և լայն հասկացողություն ջոկի հարձակման, պաշտպանության, հետախուզության, դաշտային պահակի գործողությունների ու ծառայության վերաբերյալ:

Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



# ԻՆՉՊԵՍ Է ՄԱՐՏ ՎԱՐՈՒՄ ՄԻԱՑԱԿԱՆ ՋՈԿԸ

Միացական հրաձգային ջոկի մարտական աշխատանքները շատ է տարբերվում հրաձգային ջոկի աշխատանքից, որը իր կազմում չունի ձեռքի գնդացիր:

Ձեռքի գնդացիրն ուժեղացնում է ջոկի կրակային հզորությունը: Հարձակողական մարտում, պաշտպանվելով ձեռքի գնդացրի կրակով, ջոկը հնարավորություն է ստանում ավելի յեռանդուն կերպով առաջ շարժվել և տիրել հակառակորդի նշանակված կրակային կետը: Ձեռքի գնդացիրը հնարավորություն է տալիս ջոկին՝ գրավելու հակառակորդի նշանակված կրակային կետը, ավելի խորը ներխուժել հակառակորդի դասավորումը, ոչնչացնել նրա կրակային թևային կետերը և իր կրակով պատրաստել նոր կրակային կետերի գրավումը:

Միացական ջոկը հանդիսանում է մարտական միավորի անբաժանելի մի մասը: Այդ պատճառով, որպես ընդհանուր կանոն, ձեռքի գնդացիրը գրոհի չի գնում ամբողջ ջոկի հետ միասին:

Պաշտպանողական մարտում ձեռքի գնդացիրն ուժեղացնում է ջոկի դիմադրելիությունը և համառությունը: Հրաձգային ջոկը, որը պաշտպանության

մեջ է գտնվում, ինչպես ընդհանուր կանոն առաջատակերդի առջևի յեզրի վրա հարձակման ժամանակ և նույնիսկ այդ յեզրը ներքևից հետո թիկունքային կերպով հակագրոհի չի գնում: Հրաձգային ջոկը, վորը դասավորված է լինում առաջին շարանում հակառակորդի հարձակման ժամանակ համառորեն պաշտպանվում է և իր կրակով պատրաստում է վաշտի 2-րդ շարանի հակագրոհին անցնելը:

Այդպիսով ձեռքի գնդացիրը ջոկի հրամանատարի ձեռքում հանդիսանում է հզոր կրակային միջոց, ինչպես հարձակման, նույնպես և պաշտպանության ժամանակ: Փաստորեն ձեռքի գնդացիրը հանդիսանում է ջոկի կրակային հիմքը, իսկ հրաձիգների կրակը միայն լրացնում է գնդացրի կրակային հզորությունը:

Այստեղից բղխում են միացյալ ջոկի հրամանատարի նոր պարտականությունները: Միացյալ ջոկի հրամանատարին առաջադրվում են նոր, ավելի բարձր պահանջներ:

Միացյալ ջոկի հրամանատարը ձեռքի գնդացրի կրակը հմտորեն օգտագործելու համար պարտավոր է գերազանցորեն իմանալ նրա նյութական մասը, տեխնիկական ու տակտիկական հատկությունները: Ջոկի հրամանատարը պետք է վոչ միայն ղեկավարի գնդացրի կրակը, այլև ինքն անձամբ հրաձգություն կատարի այդ գնդացրով: Մարտական պայմանները կարող են պահանջել ջոկի հրամանատարից, վոր նա անձնական հրաձգություն կատարի ձեռքի գնդացրով:

Այնուհետև ջոկի հրամանատարը չպետք է մոռանա



վոր մարտում նշանառուն կարող է շարքից դուրս գալ: Այդ նշանակում է, վոր միացյալ ջոկի յուրաքանչյուր մարտիկ պետք է պատրաստված լինի այնպես, վորպեսզի նա ամեն րոպե կարողանա փոխարինել նշանառուին:

Միացյալ ջոկի հրամանատարն իր տրամադրության տակ ունի ձեռքի գնդացիր, հրաձիգներ և գերազանց հրաձիգներ: Այդ հանգամանքը պարտավորեցնում է նրան սովորել ճարպկորեն գերազանցորեն ղեկավարել, թե կրակը և թե ամբողջ ջոկի բոլոր կատեգորիաների շարժումը-անբաժան մարտական միավորի շարժումը: Այդ ջոկի հրամանատարից պահանջվում է բացառիկ, վորոշակի հրամանատարական լեզու:

Ձեռքի գնդացիրը փոփոխում է նույնպես ջոկի մարտական աշխատանքի տակտիկական ձևերը: Ձեռքի գնդացիրը պահանջում է ջոկի հրամանատարից, վոր նա լավագույն կերպով օգտագործի տեղանքը, գերազանցորեն ընտրի և քողարկի կրակային դիրքերը, լիակատար կերպով զուգակցի կրակն ու շարժումը, ինչպես ջոկում, այնպես էլ հարևան կրակային միջոցների ու ստորաբաժանումների հետ:

Ձեռքի գնդացիրը պահանջում է նաև շարժման նոր ձևեր հարձակման և պաշտպանության նոր մեթոդներ, հակառակորդի տանկերի ու սավառնակների դեմ կռվի նոր մեթոդներ:

Ջոկի հրամանատարը պարտավոր է տիրապետել նոր հմտություններին, ինչպես կրակի, նույնպես և հրաձգային ջոկի շարժման նոր ղեկավարության-նոր կազմակերպության կատարելապես և ամենակարճ ժամանակամիջոցում:

# ԾԵԾՏԱԿԻ, ՀԱՌԱՋ

*Ջոկը պետք է յեռանդուն կերպով առաջ շարժվի, հաղթահարելով այն բոլոր դժվարությունները, վորոնք հանդիպում են նրա շարժման ճանապարհին:*

*Ջոկն իր հարձակման ժամանակ կարող է այնպիսի տեղանք ընկնել, վորը գնդակոծվում է հրետանու կրակով, կարող է այնպիսի տեղերով անցնել, վորոնք վարակված են թունավոր նյութերով. կամ կարող է անցնել ականային դաշտով: Այդ բոլոր արգելքները չեն կարող կանգնեցնել կամ նույնիսկ դանդաղեցնել ջոկի հարձակումը:* ՋՈԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՄԵՋ ՍՏԵՂԾԵԼ ԱՌԱՋ ՇԱՐԺՎԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆ ՎՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ ԱՆՎԵՐԱԴԱՐՁ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: *Բացի դրանից, ջոկի հրամանատարը պարտավոր է սովորեցնել մարտիկներին, թե ինչպես պետք է հաղթահարել առաջ շարժման ճանապարհին ընկած արգելքները, առանց դանդաղեցնելու շարժման տեմպը:* Ինքը, ջոկի հրամանատարը պետք է կարողանա ղեկավարել ջոկի բոլոր գործողությունները, նույնիսկ մարտական պարագայի ամենադժվարին պայմաններում, հայտաբերելով նախաձեռնություն, վճռականություն, հաստատ կամք և տոկունություն:

*Փորձը ցույց է տալիս, վոր* ՋՈԿԸ ՄԱՐՏԱԿԱՐԳՈՒՄ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ 20-30 ՄԵՏՐ ՃԱԿԱՏ: *Այդպիսի ճակատը ջոկին հնարավորություն է տալիս լավագույն ձևով օգտագործել տեղանքը և վերապահում է մարտիկներին անհրաժեշտ նախաձեռնություն, ինքնուրույնություն գործողությունների ժամանակ: Այդպիսի ճակատը կատարելապես ապահովում է անընդհատ ղեկավարությունը ջոկի հրամանատարի կողմից, սակայն պահանջում է նրանից ամենից ավելի վորոշակիություն այդ հարցում:*

*Ջոկի հարձակումը, առավել ևս գրոհը կրակով պատրաստելը պահանջում է հրապաշարի ավելի շատ ծախս. այդ պատճառով ջոկի հրամանատարը պարտավոր է չափազանց ուշադրությամբ հաշվի առնել հրապաշարի ծախսումը, ժամանակին լրացնել և միշտ պահեստում ունենալ փամփուշտների 2 ցինկե տուփ:*



# ԳՆԴԱՑԻՐԸ ՆՈՒՅՆՊԵՍ ԳՐՈՀՈՒՄ Է

*Գրոհը կրակով պատրաստելով ջոկի հրամանատարը անձամբ դեպի գրոհ է առաջնորդում ջոկը:*

*Գրոհը կրակով պատրաստելով ջոկի հրամանատարը անձամբ դեպի գրոհ է առաջնորդում ջոկը:*

*Գրոհի անցնելը կատարվում է դասակի հրամանատարի ազդանշանով: Հաշվի առնելով ստեղծված դրությունը, ջոկի հրամանատարը կարող է և պետք է գրոհի անցնել իր սեփական նախաձեռնությամբ: Բացի դրանից, ջոկի հրամանատարը պարտավոր է գրոհի անցնել ողնություն ցույց տալով դեպի գրոհ շարժվող հարևան ջոկերին. նույնիսկ այն դեպքում յեթե այդ մասին հրաման չի յեղել դասակի հրամանատարի կողմից:*

*Գրոհն սկսվում է 100-200 մետր հեռավորության վրա:* ՋՈԿԻ ԳՆԴԱՑԻՐԸ ՄԻՇՏ ԴԵՊԻ ԳՐՈՀ Է ԳՆՈՒՄ ԲՈԼՈՐ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱ-

ՍԻՆ, ԳՆԱԼԻՍ ԴՆԴԱԿՈԾԵԼՈՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ: Յերբ մինչև հակառակորդը կմնա 40–50 մետր հեռավորություն, ջոկը նետում է հակառակորդի վրա նռնակներ և անցնում է սվինամարտի: Սվինով հարվածի մոմենտին զենքը պետք է լցված լինի:

Հակառակորդի կրակային կետը գրավելուց հետո, ձեռքի գնդացիրն իր կրակով հետապնդում է հակառակորդին, ճնշում է թևային կրակային կետերը, պատրաստում է հետևյալ կրակային կետի վրա հարձակումը, և միևնույն ժամանակ, միշտ պետք է պատրաստ լինի յետ մղելու հակառակորդի հակագրոհը: Ջոկի հրամանատարը հաստատ պետք է հիշի և դաստիարակի իր մարտիկների մեջ այն գիտակցությունը, վոր ԳՐԱՎԱԾ ԿՐԱԿԱՅԻՆ ԿԵՏԸ ՎՈՉ ՄԻ ԴԵՊՔՈՒՄ ՉԻ ԿԱՐՈՂ ՅԵՏ ՏՐՎԵԼ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ, ՉՆԱՅԱԾ ԱՄԵՆԱԽԻՍՏ ՅԵՎ ՈՒԺԳԻՆ ՀԱԿԱԳՐՈՀՆԵՐԻՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ:

## ՄԻԱՑԱԿԱՆ ՋՈԿԻ ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՄԱՐՏԸ

Հրաձգային ջոկի (միացական) հիմնական խնդիրն է հարձակողական մարտում—իր կրակի, հարևանների և հրետանու կրակի պաշտպանության տակ յեռանդուն կերպով առաջ շարժվել, նվազագույն կորուստներով հասնել հակառակորդին, վոչնչացնել նրան սվինամարտում և տիրել նշանակված կրակային կետը:

Վորպես ընդհանուր կանոն, հարձակվող ջոկը պետք է մարտակարգի բացպատվի համապատասխան ծածկարանից: Սակայն նախքան բացպատումը ջոկի հրամանատարը հարձակման խնդիրն ստանալով, պարտավոր է պարզաբանել այդ խնդիրը, գնահատել պարագան և վճիռ ընդունել: Ժամանակակից մարտը դանդաղություն չի հանդուրժում: Այդ պատճառով ջոկի հրամանատարը պետք է խիստ արագությամբ, դրա հետ միասին ճիշտ կերպով, գնահատի պարագան և վճիռ ընդունի:

Ինչպե՞ս վորոշել ջոկի հարձակման անցնելու մոմենտը: Յենթադրենք, վոր ջոկի հրամանատարը խնդիրն ստանալով պարզաբանել է այդ խնդիրը, գնահատել է պարագան և վճիռ է ընդունել. կարո՞ղ է արդյոք այդ մոմենտը համարել ջոկի հարձակման սկիզբ: Վոչ, չի կարելի:

Ջոկի հարձակման սկիզբը պետք է համարել այն մոմենտը, յերբ ջոկի հրամանատարն իր ջոկին խնդիր է առաջադրում, յերբ ջոկը մարտակարգի յե բացպատվում, ձեռքի գնդացիրը կրակ է բաց անում իրեն ցույց տրված նշանի վրա:

Ո՞ւմ պետք է առաջին հերթին խնդիր առաջադրի ջոկի հրամանատարը:

Միանգամայն հասկանալի յե, վոր առաջին հերթին խնդիր պետք է առաջադրել ձեռքի գնդացրին: Նա կրակ է բաց անում հակառակորդի վրա 800 մետր հեռավորությունից: Հրաձիգները կրակ են բաց անում 400 մետր հեռավորությունից: Մինչև կրակ բանալու մոմենտը ձեռքի գնդացրի հրաձիգները պետք է շարժվեն ջոկի գլխում և իրենց կրակով հնարավորություն տան հրաձիգներին դեպի առաջ

շարժվելու: Այդ հանգամանքը պարտավորեցնում է ջոկի հրամանատարին լիովին և վարպետորեն օգտագործել գնդացրի կրակային հզորությունը:

## ԱՌԱՋԻՆԸ ԴԵՊԻ ԴԻՐՔ

*Տեղանքը գնահատելով և նշելով կրակային դիրքը պետք է առաջ տանել գնդացիրը: Ջոկի հրամանատարն առաջինն է շարժվում դեպի այդ դիրքը և այնտեղ տեղ է ընտրում ձեռքի գնդացրի համար: Տեղ ընտրելով, նա պայմանական նշանով իր մոտ է կանչում ձեռքի գնդացրին, հասնում է գնդացիրը և հրաման է տալիս կրակ բանալու մասին: Պետք է հաստատորեն հիշել, որ ջոկի հրամանատարը հետևյալ կրակային դիրքն է շարժվում միշտ առաջինը, և հետո արդեն գնդացրի համար տեղ ընտրելով նրան իր մոտ է կանչում դեպի նոր դիրքը: Ջոկի հարձակումը բաղկացած է կրակի ու շարժման զուգակցությունից: Նշանակում է, ջոկի հրամանատարն առաջադրված խնդիրը հաջողությամբ կատարելու համար պետք է ձեռք բերի կրակի և շարժման կատարյալ զուգակցություն:*

Կրակը ճանապարհ է բաց անում ջոկի համար: Միացական ջոկի կրակային հզորությունը ձեռքի գնդացրի մեջ է: Ուրեմն ձեռքի գնդացիրն առաջին հերթին պետք է ճնշի հակառակորդի կրակային կետերը և հնարավորություն տա ջոկին նվազագույն կորուստներով, խուժելով հասնել նրան:

*Ջոկի կրակային միջոցները մոտեցնում են նրան հակառակորդին: Այդ միջոցների կրակն ավելի դի-*



*պուկ է դառնում, նպաստում է հետագա առաջ շարժմանը: Շարժումը մոտեցնում է ջոկին վերջնական նպատակին այն է՝ սվինամարտով գրավելու վորոշված կրակային կետը:*

*Ձեռքի գնդացիրը ջոկի հրամանատարին տալիս է բոլոր հնարավորությունները ճնշելու հակառակորդի կրակային կետերը և ավելի՛ յեռանդուն կերպով (անցյալի հետ համեմատած) դեպի առաջ շարժվել: Միացական ջոկի հարձակման տեմպն ավելի բարձր պետք է լինի, քան այն ջոկինը, վորն իր կազմում չունի ձեռքի գնդացիր:*

*Ինչպե՞ս է զուգակցվում միացական ջոկի կրակն ու շարժումը:*

Վորպես ընդհանուր կանոն, հրաձիգները պետք է առաջ շարժվեն իր ձեռքի գնդացրի պաշտպանության տակ: *Նշանակում է, ջոկի հրամանատարը նախքան իր ձեռքի գնդացիրը նոր կրակային դիրք առաջ տանելը, պարտավոր է հաշվի առնել հարևան ձեռքի գնդացրերի և հաստոցավոր գնդացրերի կրակը: Նա պետք է հմտորեն օգտվի այն բոլոր հնարավորություններից, վորոնք նպաստում են առաջ շարժվելուն, վորպիսի հնարավորություններ նրան տալիս է հարևանների կրակը:*

*Սակայն այդ վոչ մի դեպքում չի նշանակում իհարկե, վոր ջոկի հրամանատարը ձեռքի գնդացիրն առաջ տանելու համար անպայման պետք է սպասի հարևան ձեռքի ու հաստոցավոր գնդացրերի կրակին: Այդ միանգամայն տակտիկական անգրագիտություն կնշանակեր: Ջոկի հրամանատարն իր առաջ շարժման համար պետք է օգտվի հակառակորդի*

կողմից կրակի ամեն մի թուլացումից, տեղանքի բոլոր ծալքերից, որոնք պաշտպանում են նրան հակառակորդի կրակից։

ՎԵՐՋԱՊԵՍ, ՆՐԱ ԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ՀՐԱՁԻԳՆԵՐ, ՎՈՐՈՆՑ ԿՐԱԿԸ ՆԱ ՊԵՏՔ Է ՕԳՏԱԳՈՐԾԻ ԳՆԴԱՑԻՐՆ ԱՌԱՋ ՏԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԵՊԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԿՐԱԿԱՅԻՆ ԴԻՐՔԸ։

## ԿԱՊԸ ՆՌՆԱՁԻԳՆԵՐԻ ՀԵՏ

Զափազանց կարևոր նշանակություն ունի միացական ջոկի հրամանատարի համար հաստատ կապը նռնաձիգների ջոկի հրամանատարների հետ։ Հրաձգային ջոկի հրամանատարը չպետք է մոռանա, որ նռնաձիգների ջոկը ըստ էության հանդիսանում է որպես դասակի հրետանի։ Նռնաձիգների ջոկն իր կրակով պաշտպանում է հրաձգային ջոկերի մարտակարգի բացազատումը։

Նռնաձիգների ջոկը ճնշում է հակառակորդի կրակային կետերը, մանավանդ խոշոր օգուտ տալով գրոհի պատրաստման ժամանակաշրջանում։ Հրաձգային ջոկերի գրոհի անցնելու հետ միասին նռնաձիգների ջոկն իր կրակը տեղափոխում է հակառակորդի դասավորման խորքը։

Հաշվի առնելով դրությունը, հրաձգային ջոկի հրամանատարը, ըստ անհրաժեշտության պետք է խնդրի դասակի հրամանատարին (կամ եթե հնարավորություն կա պետք է խնդրի նռնաձիգների ջոկի հրամանատարին) իրեն օգնություն ցույց տալու հակառակորդի կրակային կետերը ճնշելու գործում, որպիսի կետերը խանգարում են նրան դեպի առաջ շարժվել։



Ինչպես պետք է հրաձգային ջոկի հրամանատարը շարժման համար օգտագործի տեղանքը և որո՞նք են առաջ շարժման այն մեթոդները, որ նա կարող է կիրառել հարձակման ժամանակ։

Ջոկի հրամանատարը գնահատելով տեղանքը և կռվի ամբողջ պարագան, առաջ է տանում ջոկը ցատկումներով՝ մի կրակային դիրքից դեպի մյուսը։ Նայած տեղանքին և հակառակորդի կրակին, ջոկը ԿԱՐՈՂ Է ՇԱՐԺՎԵԼ ԱՄԲՈՂՋ ՀԱՍԱԿՈՎ (ԿԱՆԳՆԱԾ), ԿՈՒԶԵԿՈՒԶ, ԿՌԱՑԱԾ, ՍՈՂԱԼՈՎ, ԱՄԲՈՂՋ ՋՈԿՈՎ, ՓՈՔՐ ԽՄԲԱԿՆԵՐՈՎ (2–3 ՀՈԳԻ) ԿԱՄ ՄԵԿ-ՄԵԿ։

## ՄԻԱՑՅԱԿԱՆ ՋՈԿԻ ՀՐԱՄԱՏԱՐԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Միացական ջոկի հիմնական խնդիրն է հարձակման ժամանակ.

— Եռանդուն կերպով առաջ շարժվել իր և կրակի մյուս տեսակների պաշտպանության տակ։

— Նվազագույն կորուստներով հասնել հակառակորդին։

— Վճռական սվինամարտով հաղթահարել նրա դիմադրությունը, գերի վերցնել կամ ոչնչացնել նրա կենդանի ուժը։

— Նոր բնագծեր գրավելով ամեն կերպ իր ձեռքում պահել այդ բնագծերը։

Ջոկը, որպես կանոն, գործում է դասակի կազմում։ Կատարելով իր խնդիրը, նա օգնում է դասակի խնդիրը կատարելուն։

*Միացական ջոկը այն ժամանակ միայն հաջողությամբ կգործի հարձակման ժամանակ, յերբ կրտսեր հրամանատարը գերազանցորեն կյուրացնի բոլոր հարցերը, վորոնք վերաբերում են մարտին։*

— Ոգտագործել իր ջոկի շարժման համար հարևանների, հաստոցավոր գնդացրերի և հրետանու կրակը:

— Վորոնել նշաններ, ընտրել ամենից ավելի ակտիվները նրանցից, վորոշել մինչև այդ նշանները յեղած հեռավորությունը և կանոնագրքային վորոշակի հրամաններ տալ:

— Ոգնել հարևանին (հիմնական և ամենալավ ոգնությունը համարելով դեպի առաջ շարժումը և թևային կրակը ու հակառակորդին ուղղած հարվածը):

— Հրաձգության հարմարության և իրեն թաքցնելու համար ոգտագործել տեղանքի ամեն մի ծալքը, տեղական առարկաները:

— Հաղթահարել բազմապիսի արգելքները, իր համար ճանապարհ բանալ կրակի ու հարվածի միջոցով:

— Արագորեն վճիռ ընդունել և տոկունությամբ գործադրել այդ վճիռը, վոգևորելով մարտիկներին իր անձնական օրինակով:

## ՅԵԼՄԱՆ ԲՆԱԳԾՈՒՄ

*Յելման բնագծում դասակի հրամանատարից ստանալով և յուրացնելով հարձակման համար խնդիրը, ջոկի հրամանատարը կրկնում է այդ խնդիրը: Այնու-*



1008 / 37630

*հետև նա ուսումնասիրում է տեղանքը և նշում է գործողությունների պլանը:*

*Տեղանքն ուսումնասիրելով, նա վորոշում է թե ինչպիսի տեղական առարկաներ կարող են ծառայել վորպես կողմորոշներ (օրիենտիրներ) հարձակման ժամանակ, թե ինչպիսի կետեր կարող են վորպես դիրքեր ծառայել կրակ վարելու համար. ուսումնասիրում է փակ և բաց ճանապարհները և վորոշում է, թե ինչպես կարելի յե շարժում կատարել այդ ճանապարհներով:*

*Հավաքելով իր ջոկը մի ծածկված, բայց տեղանքը դիտելու համար հարմար տեղում, նա բանավոր հրաման է տալիս հետևյալ պլանով:*

*— Տեղանքի համաձայն ցույց է տալիս հակառակորդի հայտաբերված կրակային կետերը, նրա խրամատները և արհեստական արգելքները:*

*— Ցույց է տալիս դասակի ուղղությունը, մոտակա և հետագա խնդիրը, և թե ով պետք է պաշտպանի վաշտի և դասակի հարձակումը:*

*— Հայտնում է իր ջոկի խնդիրը և շարժման ուղղությունը (կողմորոշների համաձայն):*

*— Հայտնում է հարևան ջոկերի խնդիրն ու ուղղությունը:*

*— Խնդիր է առաջադրում ջոկին (գնդացրին և մարտիկներին) տեղանքի վրա ցույց տալով հարձակման համար յելման դրությունը և կրակային դիրքերը:*

*— Հայտնում է դասակը և ջոկը ղեկավարելու ազդանշանները և թե ով պետք է հետևի այդ ազդանշաններին:*

— Ցուցումներ է տալիս հակագազային և հակաքիմիական պաշտպանության վերաբերյալ։

— Ցույց է տալիս, թե վորտեղ է տեղավորված գումարտակային փամփուշտային կետը և թե վորտեղ է վաշտային սանիտարական պոստը։

— Նշանակում է իրեն տեղակալին։

Հրաման տալով, հրամանատարը իր ջոկն առաջնորդում է մարտակարգով, զուգակցելով իր ջոկի կրակն ու շարժումը հարևան ջոկերի կրակի ու շարժման հետ։

Առաջինն ինքն է շարժվում դեպի նոր գիծը, վորտեղ նա ինքն ընտրում է տեղը գնդացրի համար։

Մինչև ջոկի հակառակորդին մոտենալը հրացանային կրակի հեռավորության վրա, ջոկի հրամանատարն ինքն է առաջնորդում իր գնդացիրը ջոկի գըլխում, ապահովելով նրա շարժումը հրաձիգների կրակով։

## ՆԱԽՔԱՆ ԳՐՈՀԸ

Մոտենալով իրեն համար ցույց տրված գրոհի համար յելման դիրքին, ջոկի հրամանատարը պարտավոր է՝

● Կենտրոնացնել ջոկը յելման դիրքում այնպիսի ձևով, վորպեսզի կարողանան ունենալ ավելի հարմար պայմաններ կրակ վարելու համար։

Ցույց տալ ջոկին հակառակորդի կրակային կետը, վորը պետք է գրավել և շարժման այն ճանապարհը, վորով պետք է ջոկը գրոհի գնա։

Կրակով գրոհը պատրաստելուց հետո ջոկի հրա-



մանատարը դեպի գրոհ է առաջնորդում իր ջոկը դասակի հրամանատարի ազդանշանով կամ իր սեփական նախաձեռնությամբ։

Ջոկի հրամանատարը դեպի գրոհ է գնում իր ջոկի առջևից։

## ԳՐԱՎԵԼ ԲԱՐՁՈՒՆՔԸ

Դասակի հրամանատարից ստանալով խնդիրը և կըրկնելով այդ խնդիրը, 2-րդ ջոկի հրամանատար ընկ. Ծատուրյանը հավաքում է իր ջոկը անտառի մեջ 92, 1 (օրինակի համար) բարձրության արևելյան լանջում վորտեղ հետևյալ բանավոր հրամանն է տալիս։

Հակառակորդը պաշտպանում է ուղղակի մեր առաջ ընկած թփուտներով բարձրությունը, (ձեռքով ցույց է տալիս այդ բարձրությունը) և դեպի ձախ մերկ բարձրությունը (առանց թփուտների)։ Յուրաքանչյուր բարձրության վրա հայտաբերված են մեկական գնդացիր։ Հակառակորդի պաշտպանության խորքից կրակում է մարտկոցը։

Մեր դասակի մոտակա խնդիրն է՝ գրոհել հակառակորդի կրակային կետը (թփուտներով բարձունքում)։ Իսկ հետագայում գրոհել նաև այն բարձրությունը, վորը թփուտներով բարձրությունից դեպի հյուսիս է ընկած։ Առաջին ջոկը նշանակվում է ուղղապահ ջոկ։

Մեր ջոկին հրամայված է 10 րոպեյից հետո անցել հարձակման առանձին ծառի ուղղությամբ (ձեռքով ցույց է տալիս) և դեպի թփուտի արևելյան անկյունը, խնդիր ունենալով գրոհել հակառակորդի կրակային կետը աջ կողմից։

Աջ կողմից հարձակում է գործում վաշտի 2-րդ դասակը: Ավելի ձախ թփուտների միջով և նրանցից այն կողմը քարի ուղղությամբ հարձակում է գործում մեր դասակի 1-ին ջոկը, խնդիր ունենալով գրոհել միևնույն կրակային կետը, ինչ որ մենք ենք գրոհելու, միայն ձախ կողմից: Նռնաձիգները առաջ են շարժվում մեր ջոկի առջևից և կճնշեն մեր կողմից գրոհվող կրակային կետը:

Գնդացրորդները շարժվում են դեպի առաջ 150 մետրի վրա, որոշել մինչև հակառակորդի գնդացիրը եղած հեռավորությունը և հերթերով ճնշել նրան: Երբ ես առաջ դուրս գամ, և երբ ես հասնեմ առանձին ծառին 2 անգամ կթափահարեմ կարմիր դրոշակը: Այդ ազդանշանով վազելով կատարեք դեպի նոր գիծ (գիծը հետո ցույց կտամ):

Հրաձիգները հարձակում են գործում ուղղակի այստեղից իմ ձախից դեպի թփուտը և այնուհետև ձորակի արևմտյան լանջով: Առանձին ծառի մոտ կստանաք ինձնից կրակային խնդիրները:

Ես կղեկավարեմ ձայնով և դրոշակներով: Կապույտ դրոշակով, թափահարումը կնշանակի—(ՀՐԱՁԻԳՆԵՐ, Ի՛ՆՁ ՄՈՏ», սպիտակ դրոշակով թափահարումը— «ԳՆԴԱՑՐՈՐԴՆԵՐ, Ի՛ՆՁ ՄՈՏ»: Ազդանշաններին հետևում են ընկ. Մանուկյանը և գնդացրի 2-րդ համարը:

Հակօդային պաշտպանության ազդանշանն է՝ ազդափողը: Այդ ազդանշանով պետք է պատրաստել քաթանը և հակագազը: Քիմտագնապի ազդանշանն է՝



ղափողը, բոլորը հագնում են հակագազերը և շարունակում են դեպի ինձ շարժումը:

Դասակային փամփուշտային կետը այժմ գտնվում է մեր թևում 200 մետրի վրա: Նա առաջ կշարժվի 1-ին ջոկի ետևից 150-200 մետրի վրա: Վաշտի սանիտարական պոստն է Ալիբեկլու գյուղը:

Իմ տեղակալներն են ընկ. Սարգսյանն ու Հովհաննիսյանը:

— Ընկ. Սարգսյան կրկնեցեք դասակի խնդիրը:

— Ընկ. Հովհաննիսյան, կրկնեցեք ջոկի խնդիրը:

## ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԵՎԱՆԻՆ

Առանձին ծառին մոտենալով 2-րդ ջոկի հրամանատարը հայտարարել է, որ հակառակորդի կրակով առաջին ջոկը անանուն բարձրությունից կասեցված է: Նա որոշում է օգնել առաջին ջոկին և արագորեն հրաման է տալիս՝

— Ընկ. Մարտիրոսյան, մեր թևում գտնվում են մեր նռնաձիգները: Վազեցեք մինչև նրանց և ասեք ընկ. Մկրտչյանին, որ նա իր կրակը տեղափոխի հակառակորդի գնդացրի վրա. այ, այն բարձրության վրա (ձեռքով ցույց է տալիս անանուն բարձունքը): Կրկնեցեք հրամանը: Վերադարձեք այստեղ:

## ԿՐԱԿԱՅԻՆ ԿԵՏԻ ՎՐԱ

Այնուհետև հրաման է տալիս ջոկին.

— Մենք պատրաստվում ենք գրոհելու հակառակորդի կրակային կետի վրա, որը գտնվում է թփու-

ափ հարավ արևելյան անկյունում (ցույց է տալիս 99,3 բարձրության ՝ուղղությամբ)։ Մենք գրոհելու յենք հակառակորդի ձախ թևը, առաջին ջոկը գրավում է հակառակորդի այդ նույն կրակային կետի աջ թևը։ Ջոկը պետք է ճնշի հատկապես այդ կետը, գնդացիրը՝ 3 սկավառակներով, հրաձիգները՝ 15-ական փամփուշտներով։ Նշանոցը՝ մշտական։ ԿՐԱԿ։

Մեկ ու կես րոպե կրակային պատրաստությունից հետո 2-րդ ջոկի հրամանատարը տեսել է, թե ինչպես թփուտում պայթել են հրետանական արկերը անանուն բարձրության վրա և իսկույն հրաման է տալիս։

— 2–3 րոպեից հետո անցնում ենք գրոհի: Հակառակորդի միևնույն կրակային կետի վրա— հաճախակի կրակ:

Հակառակորդի 2 գնդացրերի վրա, 3-ական հրետաարկերի հերթերի պայթյունից յերկու րոպե հետո, ջոկի հրամանատարը տեսել է որ առաջին ջոկը բարձրացել է ու նետվել է գրոհի։ Նա իսկույն ևեթ հրաման է տալիս— հակառակորդի կետը ճնշված է։ Առաջին ջոկն անցել է գրոհի։ Ջոկ, լցնել զենքը։

— Դեպի գրոհ, Ի՛ՆՁ ՀԵՏԵՎԻՐ:

Մոտենալով 50 քայլի վրա դեպի հակառակորդի խրամատները հրաման տալ:

— Ջոկ պատրաստել ձեռքի նռնակները։

Մոտենալով 30–40 մետրի վրա, նոր հրաման։

— Խրամատների վրա նռնակով, ԿՐ՛ԱԿ։



Գրոհի ժամանակին գնդացիրներն ինքնուրույն կերպով դիրք են ընտրում, հաստատում են գնդացիրը բարձրության արևելյան լանջում, պատրաստելով կրակ մղելու հակառակորդին թիկունքի ուղղությամբ, վաշտը գտնվում է 93,3 բարձրության հյուսիսային կողմում 250 մետրի վրա։

---

# ՄԻԱՑԱԿԱՆ ՋՈԿԸ ՃԵՂՔՎԱԾՔՈՒՄ

## ՄԻԱՑԱԿԱՆ ՋՈԿԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇԵՐՏԻ ՆԵՐՍՈՒՄ

Հաճախ և արագորեն փոխվում են մարտի պայմանները, փոխվում են հակառակորդի կրակային միջոցների մշտական ներգործությունը (գնդացրերի և հրետանու կրակ, հակագրոհներ, ծխեր և գազեր): Այդ պայմանները պահանջում են պետկազմից հակառակորդի պաշտպանողական շերտի ներսում մարտ մղելու ժամանակ կարողանալ արագորեն գնահատել պարագան, համարձակ վճիռներ ընդունել, բոլոր մարտիկների ջանքերն ուղղել ճեղքվածքը խորությամբ զարգացնելու, համաձայնեցնելով իր գործողություններն իր գնդացրերի ու հրետանու կրակի և տանկերի ու հարեվանների գործողությունների հետ:

Հսկայական է ջոկի հրամանատարի դերն այդ մարտում: Նա ամենից մոտ է գտնվում հակառակորդին: Նա առաջին կազմակերպիչն է հակառակորդի պաշտպանողական շերտի ներսում դժվարին կռիվը մղելու ժամանակ: Նրա և ջոկի մարտիկների վրա են ուղղում հակառակորդն իր ամբողջ ջանքերը (կրակը, հակագրոհը), վերջինս կարողանա լիկվիդացիայի



ենթարկել ճեղքվածքը: Միայն կրտսեր հրամանատարը հակառակորդի պաշտպանության ներսում մարտի ժամանակ առաջացած բարդ խնդիրները վճռելու համար պետք է օժտված լինի բարձր կամքային հատկություններով, կարողանա արագորեն գնահատել պարագան և ընդունել համարձակ վճիռներ:

Հսկայական է նաև մարտիկների դերը, վորովհետև պաշտպանողական շերտի ճեղքվածքի դեպքում մարտը ավելի քան մի վորևե ուրիշ մարտ պահանջում է համաձայնեցված գործողություններ և յուրաքանչյուր անհատ մարտիկի կողմից ուժերի լարում:

Մարտիկի համար լինել միայն ջոկի հրամանատարի հրամանները կատարող, այդ շատ քիչ է: Մարտիկը պետք է վոգեվորված լինի հաջողությունը զարգացնելու ձգտումով, հաղթանակներ ձեռք բերելու ձգտումով. նա պետք է գործի համարձակ, վճռականորեն, հայտաբերի նախաձեռնություն, իր բոլոր ուժերով օժանդակի ջոկի հրամանատարին, առաջին իսկ խոսքից հասկանա նրա կարգադրությունները:

Առջևի յեզրով ճեղքած անցած ջոկերը, պետք է հնարավորին առաջ անցնեն, թեկուզ հակառակորդը դիմադրություն ցույց տալու լինի թևերում: Թևերի օջախների դեմ պետք է կռիվ մղեն յերկրորդ շարանի ջոկերը և հարեվանները: Ճեղքած անցած ջոկերի թևերում դասավորված հակառակորդի բների դեմ չափազանց վաղ դառնալը վտանգավոր է նրանով, վոր այդ դարձումը կարող է ջլատել պաշտպանության խորքի մեջ սեպվելու հաջողությունը: Վտանգավոր է այն մոմենտը, յերբ հակառակորդի առջևի

կետերը գրավելուց հետո, մարտիկները իրար են խառնվում: Այդպիսի դեպքերում, ժերբեմն զգացվում է վորոշ շփոթություն և չեն իմանում թե ինչ պետք է անել: Ջոկի հրամանատարն այդ մոմենտում պետք է կարողանա իր ձեռքը հավաքել ջոկը, արագ կերպով նրան կարգի բերել, վոգեվորել իր խոսքերով և որինակով: Կողմնորոշման արագությունը, համարձակ վճիռը, դեպի առաջ շարժումը հաջողության յերաշխիք են այդ կրիտիկական մոմենտում:

Այդ մարտում հնարավոր չեն անփոփոխ կանոններ կամ ցուցումներ տալ ջոկի տակտիկական գործողությունների համար: Մարտը չափազանց բարդ է և բազմերը պարագայի համաձայն:

Բերենք միայն մի քանի որինակներ այդպիսի դեպքերի, վորոնց մեջ ջոկը պետք է մարտ մղի պաշտպանողական շերտի ներսում: Այդ որինակները չեն կարող վորպես շաբլոն ծառայել բոլոր դեպքերի համար, հաշվի առնելով պայմանները կիարկադրեն մի ուրիշ վճիռ ընդունել:

ԱՌԱՋԻՆ ՊԱՐԱԳԱ: Տանկն անցել է հակառակորդի բնին 100 մետրի վրա: Այդ ժամանակ խրամատից լըս վում են հատ-հատ հրացանային ձիգեր ջոկի վրա: Այդ նույն ժամանակում ջոկի հրամանատարը թփուտներում տեսնում է հակառակորդի հրանոթը, վորը կրակ է բաց անում տանկի վրա:

ՎՃԻՌԸ: Հաղորդել տանկին թփերում հայտաբերված հրանոթի մասին-չի կարելի, վորովհետեվ հակառակորդը 100 մետրի վրա յե: Պետք է ձեռքի գնդացրով գնդակոծել հրանոթի հաշվարկին, իսկ հակառակորդի վրա նետել ձեռքի նռնակներ և կրակել ջոկով:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԱԳԱ: Առաջից գնացող տանկը կանգ է առել, հրաման է յեղել ուղղել թրթուրը: Հակառակորդի խմբակը (8-9 հոգուց բաղկացած) ներկառակորդի խմբակը ... (8-9 հոգուց բաղկացած) նետվել է խրամատից դեպի տանկը, նպատակ ունենալով գրավել այն: Աջ կողմից յերկրորդ ջոկն է, վորի գնդացիրը շարքից դուրս է յեկել հակառակորդի հրետանու արկով: Գնդացրային կրակով գնդակոծված է հակառակորդը, վորը և կպել է գետնին: Ձախ կողմից հարևանները հաջողությամբ առաջ են ընթանում:

ՎՃԻՌԸ: Դանդաղել չի կարելի, տանկը կարող են գրավել, իսկ հակառակորդի գնդացիրը կրակով կանգնեցնելով յերկրորդ ջոկի հարձակումը, կարող է առաջին ջոկի վրա ընկնել: Վորոշում են առաջին ջոկի ձեռքի գնդացրով արագ կերպով կրակ բանալ հակառակորդի գնդացրի վրա և գրավելով այն դադարեցնել կրակը, իսկ ջոկը անմիջապես գրոհում է թշնամու խմբակին, վորը վազում է դեպի տանկը: Յերկրորդ ջոկը կրակային ազնություն ստանալով առաջին ջոկից պետք է ոգտագործի ձեռքի գնդացրով կրակ բանալու մոմենտը, գրոհի նետվի հակառակորդի գնդացրի վրա և գրավի այն: Յերկու ջոկերի հրամանատարների միջև համաձայնություն կնքելու ժամանակ չկա. փոխգործողությունը պետք է սահմանված լինի պարագայի արագ և հմուտ գնահատման հիման վրա:

ԵՐՐՈՐԴ ՊԱՐԱԳԱ: Հաջողությամբ զարգացնելով հարձակումը, ներխուժածում դասակը աջից յենթարկվել է հանկարծակի գնդակոծման հակառակորդի

գնդացրի կողմից: Դասակի հրամանատարը և նրա օգնականը շարքից դուրս են յեկել: Դասակն իրար է խառնվել և կպել է գետնին: Առաջին ջոկի հրամանատարը տեսնում է հակառակորդի գնդացիրը թեվում, մյուս ջոկերը նրա համար տեսանելի չեն տեղանքի ծալքերի պատճառով:

ՎՃԻՌ: Ջոկի հրամանատարներից մեկն անմիջապես պետք է դասակի հրամանատարությունն ընդունի: Այդ ամենից առաջ պետք է կատարի առաջին ջոկի հրամանատարը, վորովհետեվ նրա համար ավելի պարզ է ամբողջ պարագան: Նրա վճիռն այս պետք է լինի՝ ջոկի ձեռքի գնդացիրը ճնշում է հակառակորդի գնդացրին. մնացած ջոկերը գնդացրի կրակով հետապնդում են հակառակորդի նահանջող խմբակներին: Յեթե հակառակորդի գնդացիրը հարկադրված լինի լռել կամ նահանջել, այն ժամանակ ջոկերն անմիջապես առաջ են շարժվում ընդհարման մեջ մտնելով հակառակորդի հետ:

ՊԱՐԱԳԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ: Չհաջողվեց ճնշել հակառակորդի գնդացրին: Ջոկերը կորուստներ են ունենում նրա կրակից: Թիկունքից դեպի դասակները են գալիս վաշտի հաստոցավոր գնդացիրը: Դասակի հրամանատարի տեղակալը տեսնում է գնդացրին 150 մետրի վրա դասակի աջ թեվից:

ՎՃԻՌԸ: Անմիջապես կապվել գնդացրի հրամանատարի հետ (կապավորների կամ ազդանշանների օգնությամբ). ցույց տալ նրան հակառակորդի գնդացրի տեղը և պահանջել, վոր նա անմիջապես կրակ բանա այդ գնդացրի վրա: Յերբ հակառակորդի գնդացիրը լռի, կամ սկսի յետ նահանջել, այն ժամանակ ջոկերը



նետվում են հակառակորդի պառկած խմբակների վրա, վորոնք դադարեցրել են իրենց նահանջը:

ՉՈՐՐՈՐԴ ՊԱՐԱԳԱ: Աջաթեվյան տանկը շարքից դուրս է յեկել հակառակորդի թնդանոթի կրակով: Արկերը պայթում են միջին տանկի մոտ. յետևից մոտենում է գումարտակային թնդանոթը, վորն ուղեկցում է տանկերին: Առաջին և յերկրորդ ջոկերի հրամանատարները տեսնում են այդ բոլորը:

ՎՃԻՌԸ: Ջոկերի հրամանատարները պետք է հրամայեն ձեռքի գնդացրերին կրակ բանալ հակառակորդի թնդանոթի վրա: Բացի դրանից, առաջին ջոկի հրամանատարը պարտավոր է գումարտակային թնդանոթին ցույց տալ հակառակորդի թնդանոթի դիրքը, այն թնդանոթի, վորը կրակ է վարում տանկերի վրա և պահանջի անմիջապես կրակ բանալ այդ թնդանոթի վրա:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՐԱԳԱ: Առաջին և յերկրորդ ջոկերը ընկել են հակառակորդի գնդացրի թեվային կրակի տակ: Ջոկերը գետնին են կպել: Ձեռքի գնդացրերը գնդակոծում են հակառակորդի գնդացրին. հակառակորդի գնդացրի առաջ պայթեցին յերեք ծխարկեր (ծխի արկեր): Հակառակորդի գնդացիրը տեսանելի չի, բայց շարունակում է կրակ վարել:

ՎՃԻՌԸ: Օգտագործել ծխի ամպը և անմիջապես յերկու ջոկով գրոհել հակառակորդի գնդացրի վրա: Չի կարելի առաջ շարժվել ուղղակի գնդացրի վրա, վորովհետեվ ջոկերն ամբողջ ժամանակ կլինեն նրա կրակի վոլորտում: Ջոկերը պետք է արագորեն գնդացրի գնդակոծության տակից դուրս գան, առաջ

շարժվեն և գրոհեն թևերը: Գրոհել պետք է արագորեն, վորպեսզի հարվածի հակառակորդին գրոհի այն մոմենտին, յերբ նա ճնշված է և նեղն է ընկած ձեռքի գնդացրերի կրակից և խրամատի հատակին է կպած, վորտեղ նրա վրա պետք է նետել ձեռքի նռնակներ:

ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՐԱԳԱ: Հակառակորդի կրակային կետը գնդակոծում է աջ կողմի հարեվան դասակի թևի ջոկին: Ջոկը կպել է գետնին և կրակ է վարում ձեռքի գնդացրով: Յերրորդ ջոկը խնդիր ունի հարձակվել ծառի մոտ յեղած կետի վրա, վորտեղից հրացանային դիպուկ կրակ է վարվում:

ՎԻՃԱԿԸ: Ծառի մոտ յեղած կետի վրա հարձակվել չի կարելի, քանի դեռ չի վոչնչացված սարի վրա յեղած կետը: Յերրորդ ջոկը պետք է ձեռքի գնդացրով զարկի այսպես,— կրակն ուղղել սարի վրա յեղած հակառակորդի գնդացրի վրա, իսկ նռնաձիգը պետք է ռմբակոծի ծառի մոտ յեղած կետը, իսկ մնացած հրաձիգներով ջոկի հետսամարը գրոհում է գնդացրի վրա: Գրոհի շարժման ժամանակ հրաձիգները չպետք է խանգարեն գնդացրային կրակ վարել, իսկ դրա համար հարկավոր է շարժվել գնդացրերի ձիգերի ծածկոցների միջով: Ձեռքի գնդացրերը ուժեղացնում են գրոհը մինչև սվինամարտին հասնելը և այնուհետեվ արագ կերպով միանում են հրաձիգներին և մասնակցում գրոհին:



# ՄԻԱՑԱԿԱՆ ՋՈԿԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

## ԾՈՒՐՋԱՆԱԿԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

*Չնվազեցնելով հրաձիգների նշանակությունը, միացական ջոկի հրամանատարը մեծ ուշադրություն պետք է դարձնի իր ձեռքի գնդացրի դասավորման վրա պաշտպանության ժամանակ:*

ՁԵՌՔԻ ԳՆԴԱՑԻՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՅՆՊԻՍԻ ԴԻՐՔ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ, ՎՈՐԻՑ ՆԱ ԿԱՐՈՂԱՆԱ ՃԱԿԱՏԱՅԻՆ, ՇԵՂԱԿԻ ՅԵՎ ԹԵՎԱՅԻՆ ԿՐԱԿ ՎԱՐԵԼ:

*Ամենագործոն հարվածումը հակառակորդին ինչպես հայտնի յե դա հանկարծակի թևային կրակն է:*

*Բացի դրանից, ձեռքի գնդացիրը պետք է հնարավորություն ունենա կրակ վարելու նաև թիկունքում, պաշտպանության խորքում հայտնված հակառակորդի վրա:*

*Վորպես ընդհանուր կանոն, հրաձիգները պետք է կրակ վարեն ուղղակի իրենց առջևում, բայց միևնույն ժամանակ հրաձիգների խրամատները պետք է հնարավորություն տան շուրջանակի գնդակոծմանը:*

*Յուրաքանչյուր զորամաս, յուրաքանչյուր փոքր*

առաջադրանքում, որը պաշտպանության մեջ է գտնվում, միշտ պետք է պատրաստ լինի առանց հատուկ ազդանշանների և նախազգուշացումների յետ մղել տանկերին և հակառակորդի սավառնակներին։ Այդ բանը ձեռք բերելու համար, ջոկի հրամանատարը պետք է բոլոր պարապմունքներում մարտիկների մեջ պատվաստի հակօդային, հակատանկային և հակաքիմիական պաշտպանության բոլոր պահանջների անշեղ կատարումը, որովհետև միայն ԽԱՂԱՂ ԺԱՄԱՆԱԿՎԱ ԱՆԴՈՒԼ ՄԱՐԶԱՆՔՆ Է, ՈՐ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ։

Գերազանցորեն քողարկել խրամատները (մանավանդ ձեռքի գնդացրի խրամատը), ինչպես վերերկրյա, այնպես էլ օդային հակառակորդի դիտողությունից։

Մեծ ուշադրությամբ դիտել մարտադաշտին, ճշտորեն գնահատել հայտնվող նշանները և ժամանակին զեկուցել բոլոր նկատած բաների մասին։

Դիպուկ կրակ վարել ձեռքի գնդացրով և հրացաններով հակառակորդի ցածրացող սավառնակների վրա։ Կրակ վարել ձեռքի գնդացրով տանկերի վրա զրահահար գնդակներով (յեթե տանկը հայտնաբերել է ջոկին և շարժվում է դեպի նա)։

12-15 մետր հեռավորությունից տանկի թրթուրների տակ նետել ձեռքի նռնակների կապոցներ (3—5 հատ)։

Հակագազերը պահել լիակատար սարքին դրությամբ և քիմիական հարձակման ժամանակ դիպուկ կրակ վարել հակագազերը հագած։



## ՂԵԿԱՎԱՐԵԼ ԿՐԱԿԸ

Միացական ջոկի հրամանատարին առաջադրվող պահանջները կրակը ղեկավարելու գործում չափազանց մեծ են։ Միացական ջոկի հրամանատարը պետք է ճշտորեն գնահատի մարտադաշտում հայտնվող նշանների կարևորությունը և դրան համապատասխան կրակային խնդիրներ առաջադրի ձեռքի գնդացրին, հրաձիգներին և գերազանց հրաձիգներին։ Ջոկի հրամանատարը կատարյալ հնարավորություն ունի կենտրոնացնելու իր կրակը, գնդակոծելով միաժամանակ մի քանի նշաններ, կենտրոնացնել այդ կրակը տվյալ մոմենտում ամենից ավելի կարևոր նշանի վրա։

Ջոկի հրամանատարի վերջնական նպատակն է՝ պաշտպանության ժամանակ նրան հանձնած գնդակոծման սեկտորում (250 մետր լայնության) ՋԱԽՋԱԽԵԼ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎԻ ԵԶՐԻ ԱՌԱՋ։ Կոտրել հակառակորդի կամքը, որ նա հետագայում անընդունակ լինի հարձակումը շարունակել։

Այդ խնդիրը պահանջում է գերազանցորեն կազմակերպված կրակ և խոշոր համառություն նրան հանձնած կրակային գիծը պահելու գործում։ ՋՈԿԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ԻՐ ՏԵՂԸ ԹՈՂՆԵԼ ԱՌԱՆՑ ԱՎԱԳ ՊԵՏԻ ՀՐԱՄԱՆԻ, ՆՈՒՅՆԻՍԿ ՅԵԹԵ ՆԱ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԼԻՆԻ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ։

Այս բանը պետք է չմոռանան ջոկի բոլոր մարտիկները։ Ջոկի հրամանատարն իր կողմից պարտավոր է

մարտիկներին ցույց տալ համառության, տոկունության մինչև վերջը կռվելու վճռականության օրինակ։

## ԱՆՁԱՄԲ ԿՐԱԿ ՎԱՐԵԼ ԳՆԴԱՑՐՈՎ

Միացական ջոկն ունի բոլոր հնարավորությունները կրակ վարելու նույնիսկ այն ժամանակ, երբ շրջապատված է։ Ձեռքի գնդացիրը ավելացնում է պաշտպանվող ջոկի դիմադրելիության ուժը մի քանի անգամ և նրա կրակը պետք է լրիվին օգտագործել։

Ջոկի հրամանատարը պարտավոր է կարողանալ լրացնել շարքից դուրս եկած գնդացրային համարները, ընդորում առանձնապես ուշադրություն պետք է դարձնի նշանառուի տեղակալի պատրաստման վրա։ Եթե մարտի պարագայում նշանառուին փոխարինող չլինի, այն ժամանակ ջոկի հրամանատարը պարտավոր է անձամբ, մինչև վերջին փամփուշտը, կրակ վարել ձեռքի գնդացրով։ Բոլորովին շրջապատված լինելով, ծախսելով փամփուշտները և երբ չկա մի հնարավորություն գնդացիրը փրկելու, ջոկի հրամանատարը փչացնում է գնդացիրը, անպետք է դարձնում այն և սկսում է գործել նռնակներով ու ճեղքում անցնում է ջոկի հետ յուրայինների մոտ։

Միացական ջոկի հրամանատարն իր կրակի ամբողջ ուժը կարող է ամենից ավելի լրիվին օգտագործել, որովհետև միացական ջոկը ինքնուրույն կերպով հակագրոհի չի գնում։ Նա պարտավոր է իր կրակով պատրաստել վաշտի 2-րդ շարանի հակագրոհին անցումը։



Հրաձգային ջոկի գործողությունները պաշտպանության ժամանակ սերտ կերպով պետք է կապված լինեն նռնաձիգների ջոկի աշխատանքի հետ։ Նռնաձիգների ջոկը, որպես կանոն, կրակ է վարում բոլոր նռնաձիգներով մի նշանի վրա, առանց բաժան-բաժան անելու իր կրակը։ Նռնաձիգների ջոկը կարող է խիստ օգնություն ցույց տալ հրաձգային ջոկին ծածկված նշանների վրա նռնաձիգների կրակով։

Բացի դրանից, նռնաձիգների ջոկը կարող է 2–3 րոպեյի ընթացքում 50×50 մետր մակերեսի վրա առաջացնել խափանիչ կրակ։

ԱՅՍՏԵՂԻՑ ՊԵՏՔ Է ԵԶՐԱԿԱՑՆԵԼ, ՈՐ ՄԻԱՑԱԿԱՆ ՀՐԱՁԳԱՅԻՆ ՋՈԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԼԻԱԿԱՏԱՐ ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՆՌՆԱՁԻԳՆԵՐԻ ՋՈԿԻ, ՀԱՐԵՎԱՆ ՁԵՌՔԻ ԳՆԴԱՑՐԵՐԻ, ՀԱՍՏՈՑԱՎՈՐ ԳՆԴԱՑՐԵՐԻ ԵՎ ՀՐԵՏԱՆՈՒ ՀԵՏ։

## ԻՐ ՁԵՌՔՈՒՄ ՊԱՀԵԼ ԳՐԱՎԱԾ ԿԵՏԸ

— Հակառակորդն սպասվում է Դրբի կողմից։ Դասակի խնդիրն է — պաշտպանել ռայոնը. — բարձրությունը ջաղացի հետ միասին, առանձին ծառով 96,0 բարձրությունը և ճանապարհի վրա ընկած պուրակը։ Մեր ջոկին հրամայված է պաշտպանել այդ բարձրությունը, որն առանձին ծառ ունի իր գլխին։ Գնդակոծման սեկտորն է դեպի աջ ընկած յերկու ծառը, դեպի ձախ ընկած 3 ծառը, առվի մոտ։ 96,0

Բարձրությունը պաշտպանում է 2-րդ ջոկը, Քիմիական տագնապի ազդանշանը շեփորակն է: Ռ՛ն-ով վնասվածներին և վիրավորներին ուղարկել պուրակի հետևում ընկած ագարակը: Դասակի փամփշտային կետը գտնվում է պուրակում, վաշտայինը—ագարակում:

Ստուգեցեք յուրաքանչյուր մարտիկին, մանավանդ գնդացրի նշանառուին հաջողությա՞մբ է արդյոք նա իրեն համար հրաձգության տեղ ընտրել, թե վո՞չ: Նշանակեք մեկ մարտիկի վորպես դիտող, բացատրեք նրան, նրա պարտականությունները, տեղական առարկաներով ցույց տվեք դիտողության շերտը, մարտիկներին ու գնդացրորդներին պատվիրեք խրամատներ փորել պառկած հրաձգության համար խրամատներ փորել պառկած հրաձգության համար: Ժամանակ նշանակեք 15 րոպե:

Մարտիկներին առաջ տարեք և ցույց տվեք նրանց թե ի՞նչպես հակառակորդի կողմից յերևում են այդ խրամատները, առանձնապես ուշադրություն դարձրեք գնդացրային խրամատի քողարկման վրա: Ով վոր վատ է քողարկել բջիջը, հրամայեք անմիջապես լավացնել այդ քողարկումը:

Մարտիկներին բացատրեք, վոր 800—1000 մետրը հեռավորության վրա հակառակորդի մոտենալու դեպքում նրա վրա պետք է կրակը բանալ նախ ձեռքի գնդացրով և ապա կրակ են բաց անում գերազանց հրաձիգները: Յերբ հակառակորդը կկուտակվի առվակի մոտ, կրակային մարտում պետք է մասնակցեն ջոկի բոլոր մարտիկները և դասակի նռնաձիգները, այնպես վոր կասեցնեն հակառակորդի



հարձակումը, յերբ հակառակորդը գրոհի անցնի՝ պաշտպանության կրակը պետք է ուժեղանա, հասնելով ամենաբարձր աստիճանի: Յերբ հակառակորդը մոտենա 50 մետրի վրա պետք է նրա վրա նետել նռնակներ:

— Իր ձեռքում պահել դրված կետը, դիպուկ կրակով վոչնչացնել հարձակվող հակառակորդին: Պաշտպանության ժամանակ մարտիկները պետք է հայտաբերեն դիմացկունություն, կոփվածություն, հմտություն, վճռականություն գործողությունների մեջ, տեղանքից օգտվելու կարողություն, հմտորեն օգտագործել իրենց զենքերը, կռվել տանկերի դեմ: Յեթե ջոկը շրջապատված է և օգնություն ստանալու վոչ մի տեղից հույս չկա, հարկավոր է ուժերը հավաքած ճեղքել և անցնել այն տեղով, վորտեղ հակառակորդը թույլ է:

# ՄԻԱՑԱԿԱՆ ՋՈԿԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

Յելման դրությունում բացատրելով ուսուցման նպատակը ջոկի հրամանատարը մարտիկներին հայտնում է խնդիրը՝

— Մեր վաշտը անշարժ պաշտպանության մեջ է: Մեր ջոկը հետախուզություն է կատարում խնդիր ունենալով առաջ շարժվել դեպի ձոր ընկած սարի գյուղը և զննել նրա հետևում ընկած տեղանքը. հակառակորդի հետ հանդիպելիս գերի վերցնել նրան:

— Առաջավոր դիտակետներ են նշանակվում Բարսեղյանն ու Մոնթուկյանը, ավագ է նշանակվում Բար

սեղյանը: Եթե պուրակից դուրս գալու ժամանակ նկատեք հակառակորդին, ձեզ մի հայտաբերեք, այլ անմիջապես զեկուցեք ինձ այդ մասին։ Պայմանական ազդանշաններ են այն, ինչ վոր կանոնադրքում է տրված։

Դիտակներ, ՀԱՌԱ՛Ջ։

Ավագ դիտակը (Բարսեղյանը) ճախճան հետախուզության դուրս գալը հետևյալ ցուցումները պետք է տա մյուս դիտակին՝ (Մարգարյանին)։

— Մանուկյան լսի՛ր, շարժվիր պուրակի բոլորքով (ապուշկա) դեպի աջ ճանապարհից, յես՝ բոլորքից դեպի ձախ ճանապարհից, պուրակի արևմտյան բոլորքում սպասել և ուշադրությամբ զննել տեղանքը: ՔԱՅԼՈՎ ՄԱ՛ՐՇ:

## ԱՌԱՋԻՆ ՈՐԻՆԱԿ

Հենց վոր դիտակներն սկսվում են շարժվել դասակի հրամանատարը կամ ղեկավարը պետք է ազդանշան տա ջոկին, այն ջոկին, վորը գործում է հակառակորդի փոխարեն։ Հակառակորդին ներկայացնող ջոկը պետք է սկսի իր շարժումը ծող անկած սարից, այսպիսի կարգով՝ առաջից 2-3 դիտակներ, մնացածը կորիզում 100-120 մետր դիտակներից հետո։

Պուրակի արևմտյան բոլորքում (յեզրում) Բարսեղյանն ու Մանուկյանը պետք է նկատեն մյուս ջոկի շարժումը, արագորեն քողարկվեն և սկսեն դիտել նրանց շարժումը, անմիջապես իմաց տալով ջոկի հրամանատարին հակառակորդի հայտնվելու մասին։



Ջոկի հրամանատարն այսպես է գնահատում պարագան՝

— Հակառակորդը ջոկից ավելի չէ. մեզ չի նկատել և շարունակում է իր շարժումը նույն կարգով։ Պուրակը շատ հարմար է դարանի (զասադա) համար վորպեսզի անսպասելի կերպով հարձակվել խմբակի վրա և նրան գերի բռնել։ Պետք է գործել այսպես. դիտակներին տանել մի քիչ դեպի բոլորքի խորքը, վորպեսզի հակառակորդը նրանց չնկատի, իսկ ջոկի կորիզը 2 մասի բաժանել և դասավորել բոլորքում ճանապարհի աջ և ձախ կողմերում։ Գրոհել, յերբ հակառակորդի կորիզը կհասնի վերոասած սյուներին։

Վճիռը պետք է ընդունել արագորեն։ Թանգ է ամեն մի րոպեն: Կարգադրությունն անելով դիտակներին ջոկի հրամանատարը հրաման է տալիս՝

— Զող անկած սարից պուրակի ուղղությամբ մի կիլոմետրի վրա շարժվում է հակառակորդի խմբակը բաղկացած է 10-12 հոգուց։ Ջոկին— գերի բռնել խմբակին: Մկրտչյանին և Հովհաննիսյանին— տեղավորվել թաքնված ձևով բոլորքում, ճանապարհից դեպի ձախ, ա՛յ, ե՛ն կտրված ծառի մոտ, և գրոհել հակառակորդի առաջավոր դիտակներին։ Ավագն է՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ— մնացածներին ինձ հետևեք։ Տեղավորել բոլորքում ճանապարհից դեպի աջ, ա՛յ, են ծառից դեպի թփուտը. գրոհել և գերի բռնել հակառակորդի կորիզին։ Ձեռքի գնդակներ գիրքն ա՛յ այստեղ է։ Իմ ազդանշանի համաձայն (սուլոցի) գնդակոծել կորիզը 20 փամփուշտի հերթերով։ Նշան բռնել ուղիղ վոտներին: Գաղտնաա լի-

նել կրակ վարելու ճանապարհի յերկարությամբ հակառակորդի նոր խմբակների վրա, վորոնք կարող են հայտնվել ձող տնկած սարի ուղղության վրա: Հակառակորդին գրոհել, միաժամանակ կրակ բանալով ձեռքի գնդացրերով: *Ազդանշանը յես եմ տալիս: Բոլորդ թաղնվեցեք: Դիտողությունը յես եմ կատարում: Խմբակներ ՎԱԶՈՎ:*

*Ուղղակի բոլորքում տեղավորվել չի կարելի, վորովհետև հակ. դիտակետները կարող են շարժվել բոլորքի յերկայնությամբ և հայտաբերել դարանը, իսկ այդ կքանդի ջոկի հրամանատարի ամբողջ պլանը: Ավելի ձեռնտու յե գնալ դեպի բոլորքի խորքը 20–30 մետրի վրա և պահանջել, վոր մարտիկները միանգամայն թաղնվեն՝ պահպանելով կատարելապես լռություն և անշարժություն, վորպեսզի վոչ մի բան դարանը չհայտաբերի, ամենափոքր շշուկն անգամ կամ անզգույշ շարժումը կարող են հայտաբերել դարանին:*

*Հենց վոր հակառակորդի կորիզը կհասնի վերատաչափ սյունին, ջոկի հրամանատարը ազդանշան է տալիս սուլոցով: Այդ ազդանշանի համաձայն ձեռքի գնդացիրը անմիջապես կրակ է բաց անում հակառակորդի խմբակի վրա՝ նշան բռնելով վոտքերին (վորպեսզի միայն վիրավորեն նրանց), իսկ մարտիկներն ընկնում են հակառակորդի վրա:*

*Հակառակորդի վրա պետք է ընկնել միանգամից ամբողջ թափով. հակառակորդի խմբակից վոչ վոքի չպետք է բաց թողնել:*

*Դրանից հետո մշակվում է հակառակորդի խմբակին գերի բռնելը՝ միայն ուժերի դասավորմամբ, յերբ*



*Հակառակորդը նկատել է դիտակետներին նրանց պուրակի բոլորքից դուրս գալու ժամանակ:*

## ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ ՀԱՑՏՆԵԼ ՆՈՐ ՊԱՐԱԳԱՆ

— Հակառակորդը հայտաբերել է մեր դիտակետներին և պառկել 2 ծառերի մոտ ճանապարհի վրա: Պետք է գերի բռնել նրան. դարան կազմակերպել այնպես, ինչպես այդ մենք այժմ արեցինք՝ մեզ չի հաջողվի: Ի՞նչ ձևով կարելի յե այդ բանն անել:

Կարևորն այն է, վոր վճիռն ընդունեն հենց իրենք մարտիկները. այդ բանը կսովորեցնի նրանց պարագային նիշտ գնահատական տալ, կարողանալ վճիռ ընդունել ջոկի հրամանատարի փոխարեն:

*Այդպիսի պարագայում լավագույն վճիռը կլինի՝ ջոկը բաժանել 2 խմբակի: Փոքր խմբակը 2–3 մարտիկ: Այս խմբակը կրակային մարտ է վարում հակառակորդի դիտակետների դեմ, աշխատելով նրան մոլորության մեջ գցել մեր մարտիկների թվի մասին:*

*Իսկ ջոկի մեծ մասը, ձեռքի գնդացրի հետ միասին, ծածկված կերպով շարժվում է դեպի թփուտները, վորոնք գտնվում են յերկու ծառի հյուսիսային կողմում, գրոհում են թևի կողմից կրակային պաշտպանություն ստանալով ձեռքի գնդացրերից և գերի յեն բռնում հակառակորդի խմբակին:*

*Վճիռն ընդունված է:*

*Արվում են հետևյալ կարգադրությունները:*

—Ալոյանն ու Արամյանը Սարգսյանի հրամա-

ությամբ ծառազարդի մոտ քայլերից կրակ նե-
րաց ռենում հակառակորդի վրա: Զոկն իրա
նրա շարժվում է դեպի թփուտները, որը զար-
նվում է 8 ծառի նյուրվրաջին կողմում և այնտե-
ղից գրոհում է հակառակորդի վրա:

— ՈՒՂԻՂ դեպի ճանապարհի վրա կոտրած երկու
ծառի մոտ գտնվող հակառակորդը մեկ պահուն-
կով, ԿՐԱ՛Կ:

— Ջոկ, առաջ՛, ԻՆՁ ՀԵՏԵՎԻ՛Ր:

Ջոկի հրամանատարն առաջնորդում է ջոկը դեպի
թփուտները, որտեղ նա գրոհի համար ընտրել է
որպես ելման դրություն:

Մարտիկներից պետք է պահանջել, որ նրանք
հմտորեն օգտագործեն տեղանքը շարժման ժամա-
նակ: Պետք է թաքցնեն հակառակորդից իրենց գա-
նակը և ջոկի մանյովրը ու հանկարծակի ընկնեն
նրա վրա: Միմիայն այդպիսի շարժումը կարող է
ապահովել հարձակման հաջողությունն ու անպար-
տելիությունը:

Դեպի թփուտների բոլորքը շարժման ժամանակ
պահանջել լիակատար թաքնվածություն և լռու-
թյուն:

ՀՐԱՄԱՆ Ե՛

— Երկու ծառերի մոտ հակառակորդին ձեռքի
գնդացիր, 4 նշան, բռնել այնինչ տեղը, կարճ
հերթով, ԿՐԱ՛Կ:

Հենց որ ձեռքի գնդացիրը կրակ է բաց անում
պետք է նոր հրաման տալ:

— Դեպի գրոհ, ԻՆՁ ՀԵՏԵՎԻ՛Ր:

Ջոկը շեշտակի կերպով գրոհի յն նետվում: Ճա-



ծառազարդի մոտ քայլերում գտնվող խմբակը (Ծար.
գնդացրի խմբակը) ջոկի հետ միաժամանակ նետ-
վում է գրոհի:

Ջոկի հրամանատարի կարգադրությունը հետև-
յալն է՝

— Ջոկ տնկած ցարից դեպի մեծ ճանապարհը
շարժվում է հակառակորդի մի դասակից ավելի զո-
րամաս: Ջոկի խնդիրն է՝ կրակային հարձակում հա-
կառակորդի վրա և արագորեն նրանից կտրվել: Ձեռքի
գնդացրին՝ տեղավորվել առա այստեղ, մնացածնե-
րին—տեղավորվել գնդացրից դեպի աջ բոլորքում:
Կրակ բանալ իմ ազդանշանի՝ սուլոցի համաձայն,
երբ հակառակորդի կորիզը կհասնի երկու ծառերի
մոտ: Նշանոց 4, գերազանց հրաձիգներ Վարդան-
յանին և Պետրոսյանին՝ կրակել առաջավոր դիտա-
կետների վրա, մնացածներին և ձեռքի գնդացրին—
հակառակորդի կորիզի վրա: Ետ գնալու կարգն
այսպես է— առաջ մարտիկները, իսկ հետո ես ձեռ-
քի գնդացրի հետ միասին:

Ջոկի հրամանատարի ազդանշանի համաձայն, մար-
տիկները պետք է արագ և դիպուկ կրակ վարեն,
իսկ ձեռքի գնդացիրը պետք է կրակ վարի երկար
հերթերով: Երկրորդ ազդանշանի համաձայն
մարտիկները պետք է արագորեն դադարեցնեն կրակը

և յետ գնում։ Ջոկի հրամանատարը ձեռքի ազդանշով հետ միասին պաշտպանում են ջոկի յետ գնալը, իսկ հետո ինքը նույնպես հասնում է ջոկին։

Եթե տեղանքում կան մի շարք բնագծեր, այն ժամանակ ձեռնտու է մի քանի անգամ նրանցում կրկնել կրակային հարձակումը հակառակորդի վրա՝ նրա շարքերում խուճապ առաջացնելու և կասեցնելու համար նրա շարժումը։

---



# ՄԻԱՑԱԿԱՆ ՋՈԿԸ ԴԱՇՏԱՅԻՆ ՊԱՀԱԿՈՒՄ

## ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Անշարժ պաշտպանության դեպքում միացական ջոկը կարող է նշանակվել դաշտային պահակ կամ առանձին դաշտային պահակ։

Դաշտային պահակ նշանակվում և ուղարկվում է համարային պահապան ուղեկալի պետի կողմից։

Առանձին դաշտային պահակը նշանակվում և ուղարկվում է վաշտի հրամանատարի կողմից։

Դաշտային պահակն ուղարկվում է պահապան ուղեկալից այնպիսի հեռավորության վրա, որը կարող է ապահովել պահապան ուղեկալը հակառակորդի հանկարծակի հարձակումից (800 մետր), ձեռքի գնդացրերի իսկական կրակի հեռավորությունից հաշված։ Կտրտված տեղանքում և գիշերը հեռավորությունը կրճատվում է մինչև 300 մետրով։

Առանձին դաշտային պահակը կարելի է ուժեղացնել հաստոցավոր գնդացրով և առաջ է տարվում վաշտի հրամանատարի կողմից հազարից մինչև 1 հազար 500 մետր հեռավորության վրա։ Կտրտված տեղանքում և գիշերը հեռավորությունը կրճատվում է մինչև 500–400 մետր։

իր անմիջական պաշտպանության համար դաշտային պահակն իրենից ուղարկում է պահապան զույգ (ժամապահ, կամ ժամապահ և օգնական) 50 մետր հեռավորության վրա։

Դաշտային պահակ նշանակված միացական ջոկի հիմնական խնդիրն է՝ թույլ չտալ հակառակորդի մանր խմբակներին ներծակում գործել պահապան ուղեկալի վրա, յետ մղելով նրանց կրակը և գերի բռնելով, իսկ գերազանց ուժերի ներծակման ժամանակ կասեցնել հակառակորդին։

Դաշտային պահակը իր դիրքերից յետ է գնում միմիայն պահապան ուղեկալի պետի հրամանով։

Դաշտային պահակը դիրքում կանգնած ժամանակ շարունակ գտնվում է լիակատար մարտական պատրաստականության մեջ, քողարկվում է խնամքով և պահպանում է լիակատար լռություն։ Դաշտային պահակի դիրքը պետք է պատրաստված լինի շուրջանակի (չորս կողմից) պաշտպանության համար։ Դաշտային պահակը հակառակորդի անհատ մարդկանց և մանր խմբակներին (3–4 մարդ) թույլ է տալիս, որ մոտենան իր դիրքին և կարճ հարվածով նրանց գերի յե բռնում, կամ ոչնչացնում է։ Հակառակորդի գերազանց ուժերի հարձակման ժամանակ դաշտային պահակն իր կրակով կասեցնում է հակառակորդին մինչև յետ նահանջելու մասին հրաման ստանալը։ Դաշտային պահակը պահապան ուղեկալի ռայոնն է յետ գնում պահապան ուղեկալի և իր կրակի պաշտպանության տակ՝ ցատկումներով— մի դիրքից դեպի մյուսը։

Հակառակորդի հայտնվելու բոլոր դեպքերում



դաշտային պահակն անմիջապես զեկուցում է պահապան ուղեկալի պետին։

Օրինակներով տեսնենք թե ինչպիսի աշխատանք է կատարում դաշտային պահակը (միացական ջոկը)։

## ԿՐԱԿԻ ՊԱՏՐԱՍՏ

2-րդ վաշտը ռայոնի անշարժ պահպանությունն է կատարում. 2-րդ դասակի ջոկի հրամանատարը ժամի 12-ին, 25/5-րդ ամսի, 185,2 բարձրության վրա խնդիր է ստացել գրավել 180 բարձրությունը, որպես դաշտային պահակ։

Դաշտային պահակի պետը խնդիրն ստանալով բացատրում է մարտիկներին—

— Ջոկը նշանակված է դաշտային պահակ, դիրքը ուղղակի մեր առաջ է, 180 բարձրության վրա (ցույց է տալիս)։ Հրաձիգներ լցրեք հրացանները 4 փամփուշտով։ Բարսեղյանին և Մանուկյանին նշանակում եմ դետք, ավագը կլինի Մանուկյանը. գնացեք 180 բարձրության ուղղությամբ, «կանգ առման» ազդանշանն է դեպի վեր բարձրացած կապույտ դրոշակը։ Ընկ. Մանուկյանն կրկնեցեք հրամանը...

Քայլով մարշ։ Իմ տեղակալն է ընկ. Սարգսյանը, ՋՈԿ, ՈՒՍՆԻՎԱՐ, մեկական, իմձ հետևից, ՔԱՅԼՈՎ, ՄԱՐՇ։

Հասնելով 180 բարձրությանը տեղանքի մոտ և տեղավորվելով ծածկված տեղում ջոկի հրամանատարը հրաման է տալիս՝

— Ընկ. Հովհաննիսյան կանգնեցեք այ, են ծառի մոտ և դիտեցեք կոլխոզի այգու տեղը և Աղավ-

նատուն գյուղը։ Բոլոր նկատած բաների մասին զեկուցեք ինձ։ Կրկնեցեք (ժամանակավոր դիտող)։

— Գնդացրորդնե՛ր, պատրաստեցեք ձեռքի գնդացիրը մարտի համար և հասեք այդ գնդացիրը ժամանակավոր դիրքում,— այս անտառակի, ահա՛, այն անկյունում։ Գնդակոծման սեկտորն է Ջեյվա և Աղավնատուն գյուղերը։

Այսպիսի կարգադրություններ անելով ջոկի հրամանատարն ուսումնասիրում է դաշտային պահակի դիտողության սեկտորում ընկած տեղանքը և պաշտպանության տեղերը. Ժամապահի համար տեղ է ընտրում և վճռում է հարկավո՞ր է արդյոք ժամապահի օգնական, թե ոչ։ Պահակի դասավորման համար տեղ է ընտրում (գնդացրի և հրաձիգների համար)։

## ՎՈ ՈՑԱԿԻ ՀՐԱՄԱՆ

Դրանից հետո նա հրաման է տալիս— Հակառակորդն առաջանում է արևմուտքից, (ցույց է տալիս Ջեյվա գյուղը)։ Մի ժամ առաջ նրա առաջավոր զորամասերը հայտաբերվել են Ջեյվա գյուղի արևմտյան կողմում 20 կիլոմետրի վրա։ Մեր դասակը № 2 պահապան ուղեկալն է կազմում և բռնում է 175 բարձունքի շրջանը, դասակի հրամանատարական կետը գտնվում է (185,2 բարձրության) հյուսիս արևմտյան լանջում։ Մեր ջոկին հրամայված է ժամի 13-ին 180 բարձրության վրա, դիրք գրավել, դիտողության սեկտոր ունենալով կոլխոզի այգին, խճուղին (շոսեն), գնդակոծման սեկտորն է Ջեյվա և Աղավնատուն գյուղերը։

№ 1 ուղեկալից դրված դաշտային պահակը գտնվում է մեզանից դեպի հյուսիս 450 մետրի վրա 2 անանուն բարձունքների վրա։ Մեզանից դեպի ձախ մենավոր ծառի մոտ և վերստաչափ սյունի մոտ 1-ին վաշտի դաշտային պահակը։ Մեր և հարևանի մեջ ընկած կցուրդը (սուրկ) հակառակորդի միաժամանակ յերևալու դեպքում աջ կողմից պաշտպանվում է հրաձիգների կրակով, ձախ կողմից ձեռքի գնդացրով, մնացած բոլոր դեպքերում—ինչպես յես հրաման կտամ։

Պոստ կտրվի անտառակի արևմտյան անկյունում։

Առաջին հերթափոխ եմ նշանակում ընկ. Ալեքսանյանին և Մամեդովին, ժամապահ՝ Մամեդովին. 2-րդ հերթափոխ կլինեն Մանուչարյանը և Քութաթյանը, ժամապահ՝ Մանուչարյան։ Ձեռքի գնդացրինը, պատրաստել 2 խրամատ ծնկից հրաձգության համար —հիմնականը՝ անտառակի հարավ-արևմտյան անկյունում և 2-րդը —հարավ-արևելքում 100 մետրի վրա, գնդակոծման սեկտոր ունենալով Ջեյվա և Աղավնատուն գյուղերը և լրացուցիչ սեկտոր—խճուղին։ Հրաձիգները պատրաստում են ծնկից հրաձգության խրամատներ անտառակի հյուսիս արևմտյան անկյունում, ավելի արևմուտք փոսեր։ Գնդակոծման սեկտորն է 170 նշումը և անտառակի ուղղանկյունը (ճշտորեն ցույց է տալիս այն տեղանքը, թե ով և վորտեղ պետք է խրամատ փորի և ինչով պետք է քողարկի)։ Խրամատների փորումը վերջացնել մի ժամից հետո։ Հետևում է ժամապահի

ազդանշաններին ընկ. Ենգոյանը: Առաջին տարբերակի ազդանշանն է յերկարատև սուլոցը— բոլոր մարտիկները մնում են խրամատներում առանց շարժվելու:

Բեմխական ազդանշանն է կարճատև սուլոցները— բոլոր մարտիկները հագնում են հակագազերը ու դիտողություն են կատարում դեպի հակառակորդը: Կրակ բանալ միմիայն իմ հրամանով. ընդունել փախստականներին, իսկ բանակցողներին վոչ: Ջոկի նահանջի ճանապարհը նույնն է ինչ ճանապարհով, վոր այստեղ ենք յեկել: Ետ նահանջել միմիայն իմ հրամանով: Իմ տեղակալներն են Բարսեղյանն ու Մանուկյանը: Անցաբանը «Հրոտոն»:

## ՊՈՍՏԸ ԴՈՒՐՍ Է ԿԱՆՉՈՒՄ

Այնուհետև ջոկի հրամանատարը հրաման է տալիս— Դովլեթյան և Մարտիրոսյան, պատրաստվեցեք պոստը գնալու, ցույց տվեք զենքն ու փամփուշտների պայուսակը — լցնել հինգ փամփուշտով հրահանը դնել մարտական վոտքին, ինձ հետևվեք, ՔԱՅԼՈՎ ՄԱՐՇ:

Պոստին մոտենալով հրաման է տալիս— Հերթափոխ պահակ, ընկ. Մարտիրոսյան դուք ժամապահ կլինեք, դիտեցեք ուղղակի ձեր առջևվում յեղած կոլխոզի այգին և ձախ կողմից խճուղին, 2 կմ ներառյալ: Հատուկ ուշադրություն դարձնել կոլխոզի այգու և Աղավնատան գյուղի վրա:

Ընկ. Դովլեթյան դուք կլինեք ժամապահի օգնական



ինձ կանչելու պայմանական նշանն է՝ վեր բարձրացնել գլխարկը, յերբ կհայտնվեն 2-4 մարդ բարձրացնել 2 անգամ գլխարկը. յերբ կհայտնվեն դաշտային պահակից գերազանցող խմբակներ, բարձրացնել և թափահարել գլխարկով: Ինձ կանչեցեք առանց սպասելու ժամապահի հրամանին:

Ժամի 15 անց 20 րոպե ժամապահն ու օգնականը նկատեցին, վոր անանուն առվակի ափով մի կարմիր բանակային է գալիս ուղիղ դեպի պոստը: Ժամապահի օգնականը բարձրացնում է դեպի վեր գլխարկը: Ազդանշաններին դիտողը զեկուցում է.

— Ընկ. ջոկի հրամանատար, ձեզ կանչում են պոստ:

Դաշտային պահակի պետը հրաման է տալիս.

Ընկ. Գաբրիելյան վեր կացեք, հրացանը կրակի պատրաստ, ինձ հետևվիր, ՔԱՅԼՈՎ ՄԱՐՇ:

Ժամապահն անընդհատ հետևվելով յեկող մարտիկի շարժմանը, նրան թույլ է տալիս մոտենալու 60-70 մետր հեռավորության վրա և «կանգ առ» կտրուկ և յեռանդուն հրամանով կանգնեցնում է նրան:

Պոստին մոտեցող դաշտային պահակի պետը մոտենում է մինչև 30-40 մետր հեռավորության վրա և հրաման է տալիս.

— Բռնվա՛ծ, «յետ դարձ» վայր դնել զենքը, ձեռքերը վերև: Ընկ. Գաբրիելյան, տարեք բռնվածին պոստի թիկունքը: Ինքը վերցնում է նրա զենքը և մոտենալով ծածկված տեղ տարած բռնվածին հարցնում է նրան անցաբանը:

Իմանալով, վոր բռնվածն անցաբանը չգիտե, բայց պատասխանում է 3-րդ գումարտակի հետախուզներից

թվին, և տեղեկագիրը է տանում, հրամայում է.

— Ընկ. Դավթյան անմիջապես ուղարկեցեք № 2 պահապան ուղեկալի պետին բռնված ընկերոջը, մինչև պահապան ուղեկալը զենքն ինքներդ տարեք։

Ժամի 15-50 րոպե. ժամապահն ու ոգնականը նկատում են, որ անտառակի կողմից գալիս են հակառակորդի յերկու զինվորներ զենքով։

Ժամապահի ոգնականը վեր է բարձրացնում գլխարկը 2 անգամ։ Գաղտնի ազդանշաններին դիտողը ջոկի հրամանատարին զեկուցում է այդ մասին։ Ջոկի հրամանատարը հրաման է տալիս։

— Ընկ. Զորանյան և Վոսկանյան՝ վեր կացեք, հրացանները կրակի պատրաստ. ինձ հետեվեցեք, քայլով ՄԱ՛ՐՇ։

Ժամապահն անընդհատ հետևելով զինվորների շարժմանը, նրանց թողնում է մոտենան 60—70 մետր հեռավորության վրա և ձայնով կանչում է «կանգ առ» թե չե կկրակեմ,— կանչեցնում է նրանց։

Պոստին մոտիկցող դաշտային պահակի պետը պատրաստելով ձեռքի նռնակը, մոտենում է բռնվածներին 30—40 մետր հեռավորության վրա և հրաման է տալիս։

— Ետ դարձ, դեն գցիր զենքը, ձեռքերդ վերև. հրաձիգներ վերցրեք բռնվածներին և տարեք պոստի թիկունքը (անտառակը)։

Բռնվածներին յետ տանելով մի ծածկված տեղ, զենքը մի կողմ դնելով պահակի պետը խուզարկում է բռնվածներին, իսկ կրակելու պատրաստ մարտիկները պահպանում են նրան։



Խուզարկությունից հետո նա հարցնում է բռնվածներին։

— Վոր զորամասից եք, ո՞վ է ձեզ ուղարկել այստեղ և վո՛րտեղ է մնացել ձեր զորամասը։

Հարց ու փորձի ժամանակ հայտաբերվում է, վոր նրանք փախստականներ են։

Դաշտային պահակի պետը պահապան ուղեկալից ուղեկցախումբ է կանչում (կոնվոյ) և հանձնում է նրան բռնվածներին։

## ՏԵՂԵՐԴ, Ի ՄԱՐՏ

Ժամի 17-30 րոպե պոստը նկատել է հակառակորդի խմբակի շարժումը բաղկացած 7 մարդուց, վորոնք շարժվում են կոլխոզի այգուց դեպի անտառակի ուղղությամբ և 3 մարդու, վորոնք դուրս են գալիս անանուն գետի ակունքից և գալիս են պոստի ուղղությամբ։

Ժամապահի ոգնականը վեր է բարձրացնում և թափահարում է գլխարկը։ Դաշտային պահակի պետը հրաման է տալիս—

— Պահակ տեղերդ, մարտի։

Ինքն արագորեն դուրս է վազում ժամապահի մոտ և համոզվելով, վոր իրոք հակառակորդի խմբակ է գալիս, հրաման է տալիս՝

— Գնդացրորդներ՛, պատրաստվեցեք հակառակորդի խմբակը գնդակոծելու համար, վորը շարժվում է անտառից դեպի մեզ։ 3 հրաձիգներ (անունները տալիս է) իմ հրամանատարության տակ, բռնել հակառակորդի 3 մարդուց բաղկացած խմբակին։ Պետք է շարժվենք կտրած անտառակի միջով և մե-

Նավից ծառի հարավ-արևմտյան կողմից։ Այդ խրճիթի մոտ անցակետը կլինի ընդ. Պողոսյանը, դաշտային պահակի դերում՝ գնդացրորդը։

Ժամը 18 անց 30 րոպե պետը հայտարարել է հակառակորդի հարձակումը մոտավորապես մի ջոկի ուժով, որը շարժվում է ձորակի միջով 250 մետրի վրա, կոլխոզի այգուց դեպի հյուսիս, բացի դրանից, մոտավորապես մի դասակի կազմով հարձակվում է գործում Աղավնատուն գյուղից դաշտային պահակի ուղղությամբ և մոտավորապես 5 ջոկի կազմով Ջեյվա գյուղից։ Ժամապահի օգնականը դուրս է կանչում դաշտային պահակի պետին։ Դաշտային պահակի պետը համոզվելով, որ տրված տեղեկությունը ճիշտ է, հրաման է տալիս։

— Ընկ. Դավթյան, ուղարկելով զեկուցեք պահակային ուղեկալի պետին հակառակորդի գերազանց ուժերի հարձակման մասին։ Ձեռքի գնդացիր պատրաստվիր կրակով հանդիպելու հակառակորդի հիմնական խմբավորումը, որը հարձակվում է Աղավնատուն գյուղից։ Կրակ բաց արեք կարմիր դրոշակի թափահարման համաձայն։ Ժամապահ և օգնական բոլոր հրաձիգների հետ միասին գրավեցեք խրամատները, անտառակի հյուսիս-արևմտյան անկյունում, հրաձիգներ պատրաստվեցեք կրակով հանդիպելու հակառակորդի խմբակին, որը հարձակվում է



գործում է ջոկը ուղղությամբ դեպի անտառակի ուղղությամբ։ Կրակ բանալ իմ հրամանով։

Այնուհետև ջոկի հրամանատարը զեկուցագրեր է գրում № 2 պահակային ուղեկալի պետին։ Այդ զեկուցագրի մեջ նա ցույց է տալիս, թե ինչ ուղղությամբ և ինչ քանակով հակառակորդը հարձակվում է գործում, թե ինչ են անում հարևան դաշտային պահակները և թե ինչ է անում ինքը դաշտային պահակի պետը (իր ընդունած վճիռը)։

---

# ՑԱՆԿ

Էջ


Առաջաբանի փոխարեն . . . . . . . 3
Ինչպես է մարտ վարում միայնակ ջոկը . 5
Միայնակ ջոկը ճեղքվածքում . . . . 24
Միայնակ ջոկը պաշտպանության մեջ . . 31
Միայնակ ջոկի հետախուզությունը . . 37
Միայնակ ջոկը դաշտային պահակում . . 46




ՀՀ Ազգային գրադարան
NL0212447

41. 667

ДЕЙСТВИЯ УНИТАРНОГО ОТДЕЛЕНИЯ

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.